ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՓՊՄԱՊՁԲ-1/1

Ք.Երևան 21.11.2017թ.

ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական ռեզերվների գործակալությունը, ի դեմս գործակալության պետի ժ/պ Ա.Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և <<Նատֆուդ >> ՓԲԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ա.Աղաբեկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Գնորդի կողմից <<սննդամթերքի>> ձեռքբերման N ՀՀ ԱԻՆ ՊՌԳ-ՓՊՄԱՊՁԲ-1 ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի նախաորակավորման ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացույցային օրվա ընթացքում՝ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը կարող է դադարացնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Գնորդին: Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցվում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնորդի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքնային օրը: Այդ ընթացքում Վաճատողի մասին տվյալները հեռացվում են սկզբնական պայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Նույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պաատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Վաճառողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմողտեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:
3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Գնորդին:
3.3 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
3.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:
3.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք.Երևան, Դավիթաշեն 4 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀ 900013003018	ք.Երևան, Նալբանդյան 50շ, բն.57 <<Կոնվերս բանկ>> ՓԲԸ, Հ/Հ 1930031226060100
ՀՎՀՀ 00153247 էլ.հասցեն՝gnumner@mil.am ՀՀ ԱԻՆ աշխատակազմի Պետական ռեզերվների Գործակալության պետի ժ/պ	ՀՎՀՀ 02701906 <<ՆԱՏՖՈՒԴ>> ՓԲԸ-ի ՏՆՕՐԵՆ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ա.Ա. ԵԱԲԵԿՅԱՆ